

տաճարին ի յիշատակ իւր և իւր ամուսին Մարիամի Մարտի 4, № 125.

Առնդակ և նորա գրութեան պատասխան Խորէն Արքեպիսկոպոսին, որով  
կ'որդորէ և կ'պատուիրէ նորան ջանալ միսիմարել Բալլգարիայի, Բուժա-  
նիայի և Ալստրո — Շոնգարիայի Հայերին և առաջնորդութեան աթոռ Հաս-  
տատել, Մարտի 4, № 126.

Առնդակ Առն Միրայէլ Լօրիս — Մելիքեանին, որով կ'շնորհաւորէ ծայ-  
րագոյն յանձնաժողովի նախագահութեան նորընկալ պաշտօնը, Մարտի 4,  
№ 128.

Առնդակ միսիմարութեան Կարապետ Եղեանին իւր Հանգուցեալ Եղիստ-  
բէժ մօր Համար, Մարտի 6, № 129.

Առնդակ Կ. Պօլսեցի Յակոբ Էֆէնտի Դաղէզեանին, որով կ'շնորհաւորէ  
նորան Թուրքիայի կայսեր անձնական դանձի Հաշուակալութեան նորընկալ  
պաշտօնը և քաղաքական աստիճանը, Մարտի 6, № 130.

Առնդակ յանձնարարական ներսէս Արքեպիսկոպոսին, Կ. Պօլսի Պատ-  
րիարքին Պետրոս Արքեպիսկոպոս Անհապետեանի զնալու Համար Կ. Պօլս,  
Մարտի 6, № 131.

Գրութիւն Նուիկովին Թուրքիայի զրանը նորընտիր ուստական դեսպա-  
նին, որով կ'շնորհաւորէ նորան նորա պաշտօնը, Մարտի 20, № 141.

\* \* \*

#### Գ. ՃԵՄԱՐԱՆԻ Ա. ԵՒ Բ. ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱԵԱՆԴԵԼԻ ԱՌԱՐ- ԿԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ.

Վեհ. Պաթողիկոսի Հրամանով առանձին Հրահանգով որոշվեցան և  
Հրատարակվեցան ձեմարանի աշակերտացուների կանոնները: Արովհետև  
աշակերտների կարօղ են մտնել քննութեամբ նոյնպէս Բ. և Գ. դասարան-  
ները, ուստի կ'Հրատարակենք աճա Ա. և Բ. դասարաններում աւանդիլի  
առարկաների ծրագիրը, որ ձեմարանի աշակերտացուներն կ'արօղանան նոյն  
չափով պատրաստվել իւրաքանչիւր դասարան մտնելու համար:

Արովհետև Գ. ձեմարանի աշակերտներ կէսից աւելի Երեւանի թեմից են,  
և միւս վիճակների և Թիւրքիայի և Պարսկաստանի ուսման կարօտ Հայ  
պատանիներն զրկանք կ'արօղ են կրել սորանից, ուստի ձեմարանի վար-  
չութիւնը, Վեհ. Պաթողիկոսի Հրամանով, տնօրինեց, որ 1880—1881  
ուսումնարանական տարին Երեւանի թեմից աշակերտներ չընդունվին, և  
նոցա տեղ միւս թեմերից և Թիւրքիայից և Պարսկաստանից պահանջվեցան  
30ից աւելի աշակերտացուներ տեղական առաջնորդների և թեմական վե-  
րատեսուչների ընտրութեամբ, մինչև Վեհափառ Պաթողիկոսի առանձին  
կարգադրութիւնը: Ուստի Երեւանի թեմի րնակիչներն 1880—1881 տարի  
իւրեանց զուգակներն ձեմարանում ընդունելու համար խնդրատու չարեա  
տի լինին:

Ա. դասարանում կաւանդվի. Կրօնից. Սրբազան պատմութիւն Հին կաա-  
կարանից մինչև Բաբելոնի դերութիւնը (Ձեռնարկ Ամբր. Գալթայեանի).



Հայկական լեզուից. Գերականութեան Ա. մասն և թարգմանութիւններ գրաբարից: (Չեռնարկ Նախակրթանք Գարրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանի):

Չայնագրութիւն. Առաջին ձայնից մինչև երրորդ ձայն վարժ կարգալով և կանոնաւոր գրելով. Բացի սորանից առանձին պիտի վարժվին ժամագրքից առնված քանի մի կարևոր եկեղեցական երգերի վերայ:

Ընդհանուր աշխարհագրութենից. Համառօտ տեղեկութիւններ ուսումնական (մատեմատիկական), բնական և քաղաքական աշխարհագրութենից: Ուսումնական մասից հարկաւոր է իմանալ միայն աշխարհագրութեան վերաբերեալ ամենահարկաւոր նախագիտելիքները:

Ռուսական լեզուից. Վարժ ընթերցանութիւն, անսխալ արտագրել գրքից: պատմել կարդացածը, գրել կարճ պատասխաններ տուած հարցերին, թեթիւ և հեշտ հասկանալի ոտանաւորներ անգիր անել, ուշադրութիւն դարձնել А, О, Ы, Я, Ю, И, І, Ё, Э, Ь և Ъ տառերի վերայ:

(Չեռնարկ. Գործնական դասագիրք Ռուսաց լեզուի Ն. Տէր Յակոբեան:)

Սկզբունք բնական պատմութեան. — Հասկացողութիւն բնութեան վերայ. — Բնութեան բնական արտագրութիւնները. — Հասկացողութիւն բոյսի բնական գործարանների վերայ. — Կենդանիների ընդհանուր յատկութիւնները. — Ամէօբայի, հիգրայի, սօլիտերի, տղրուկի, գետի խեցգետնի, իշխան-ձկան, գորտի, հաւի, շան և մարդու ներքին և արտաքին նկարագրութիւնը. — Հասկացողութիւն օդի, նորա շարժողութեան (քամիների) և ջրի վերայ: Սառչոյ, ձիւն, ամպ և անձրև. Հասկացողութիւն մագնիսի և կողմացոյցի վերայ. —

Թուարանութենից. Վերացական և անուանական թուերի չորս գործողութիւնները. Վերածումն և անդրադարձումն. Ռուսաստանի և եւրոպական զխաւոր պետութիւնների մէջ գործածելի չափերը:

(Դասագիրք Մարտիրոս Սիմեոնեանի. Խնդիրների գիրք Եւտուշևսկու առաջին մասն:)

Բ. դասարանում կաւանդվի. Կրօնից. Սրբազան պատմութիւն հին կտակարանից Բաբելոնի դերութենից մինչև վերջը: (Չեռնարկ Ամբր. Գալֆայեանի):

Նոր կտակարան ամբողջապէս: (Չեռնարկ նոյն):

Հայկական լեզուից. Գերականութեան երկրորդ և երրորդ մասերը: (Չեռնարկ Տարեք քեր. Հ. Արսէն Ս. Բագրատունու):

Չայնագրութիւն. Երրորդ ձայնից մինչև վերջ ձայն. Բացի սորանից պատարագի արարողութեան վերաբերեալ երգերի լաւ տեղեկութիւն ունենալ պէտք է:

Ընդհ. աշխարհագրութենից. Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի և Ավստրալիայի բնական, տոհմական (этнографический) և քաղաքական նկարա-



գրութիւնը (2եռնարկ. Բաղդատական աշխարհագրութիւն Պետերբուրգի Հայ ուսանողների աշխատասիրութիւն, Վաղարշապատում տպւած)։

Ռուսական լեզուից. Ուղիղ և վարժ ընթերցանութիւն թարգմանութեամբ և պատմելով կարգացածը, գործնական վարժութիւն գրելում անգիր սովորել թեթեւ և հասկանալի ոտանաւորներ, առաջին մասն քերականութեան, ուշագրութիւն դարձնելով զխաւորապէս հոլովմունքին, Բայերի խոնարհումն մինչև անկանոն բայեր։

(2եռնարկներ. Даръ Слова, Семенова և 1-ая ч. грамматики. Этимология. Иванова.)

Ֆրանսական լեզուից. Գլխաւոր կանոններ տառեր արտասանելու և կապելու, Ընթերցանութեան և գրութեան վարժութիւն, Խմբական և առանձին ընթերցանութիւն, Քերականական տեղեկութիւններ. մասնիկ, մասնիկների փոփոխութիւն սեռով և թուով, Հոլովներ նախադրութիւններով, Որոշ մասնիկի միութիւն de և à նախադրութիւնների հետ (contraction) և ձայնաւոր տառերի զեղչումն (élision)։ Գոյական անուններ. յոգնական թուի կանոնաւոր կազմութիւն, Ածական անուններ. իգական սեռի և յոգնական թուի կանոնաւոր կազմութիւն։

Թուական անուններ. քանակական և դասական։

Դերանուններ. էական, ստացական, ցուցական և հարցական, Ինքնակայ և միաւորված (գոյական և ածական)։

Օժանդակ և կանոնաւոր բայերի խոնարհումն հաստատական ձեռով սահմանականում։

Ձանազան նախադասութիւնների բերանացի և գրաւոր թարգմանութիւններ ֆրանսերէնից հայերէն վերոյիշված քերականական կանոնների համեմատ։

Նշյալիսի նախադասութիւնների բերանացի և գրաւոր թարգմանութիւններ ռուսերէնից ֆրանսերէն միեւնոյն յարմարմամբ։

Բառերի և ոճերի անգիր սերտումն, Փոքրիկ ոտանաւորների անգիր սերտ։

Ուղղագրութեան վարժմունք և օրինակում գրելից։

Մարգոի 2եռնարկով մինչև 55 § .

Հայաստանի արգի աշխարհագրութիւն, (2եռնարկ և Տեղագիր Հայոց մեծաց, Ղ. Վ. Ալիշանեան, Վենետիկ)։

1. Մակերեւոյթի նկարագիրը — ծովակներ, գետեր, լեռներ, բարձրանդակներ և դաշտեր։

2. Կլիմայի և բերքերի նկարագիրը — կենդանիներ, բոյսեր և հանքեր։

3. Բնակիչների նկարագիրը — նոցա քանակութիւնը, կրօնը, պարապմունքը և բարքը։

4. Հայաստանի բնակչութեան մասերը Ա. Ռուս. Հայաստանի գաւառները։

1) Երևան, 2) Կարս, 3) Բաթում, 4) Տփլիս, 5) Բաքու, 6) Գանձակ և 7) Շուշի։



Բ) Օսմանեան Հայաստանի դաւառները. 1) Էրզրում, 2) Խարբերդ, 3) Տիարբէքլի, 4) Մուշ, 5) Քիւքլատան, 6) Վան և 7) Բայազիտ:

Գ) Պարսկական Հայաստանի դաւառները. 1) Մակու և 2) Թաւրէզ:

Բնական պատմութենից. — Անողնաշար կենդանիների հատուածի յատկութիւնները. այդ հատուածին վերաբերեալ կենդանիների մարմինների կազմութեան և դանդաղան գործարանների դրութեան նկարագրութիւնը. Մասերի, դասերի և կարգերի ընդհանուր յատկութիւնները. Բոյսի սերմը, նորա մասերը և աճումը. Փօրֆօլօգիքական տեսութիւն բոյսի գլխաւոր գործարանների (արմատ, բուն, տերև, ծաղիկ և պտուղ). Բոյսի տարրական կազմութիւնը (վանդակներ, անօթներ և բուսական հիւսուածներ). — Բոյսի սնունդը և բաղմանալը. (Չեռնարկներն են. կենդանաբանութեան համար Зоология Герда և Зоология Григорьева, իսկ բուսաբանութեան համար Начатки Ботаники Гукера):

Թուարանութենից. հասարակ և տասնորդական կոտորակները ամբողջապէս. Պարզ և բարդ երկրորդական կանոն. Պարզ և բարդ տոկոսների կանոն. մուրհակների զեղչման կանոն. Օղակապ կանոն. ընկերութեան կանոն. խառնուրդի կանոն. առանձին ուշադրութիւն դարձնելով փորձերի (պրոբներին) վերաբերեալ խնդիրներին:

(Բաժանալիք Մարտիրոս Միմչօնեանի. Խնդիրների զիրք. Եւտուշեակա երկրորդ մասը.)

## ՀՐԱՀԱՆԳ

ՎԵՍՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՑ ՈՐԷ ԿԵՄԻՅՈՒ ՄՏԵՆԵԼ ԵՎՈՒՋԻՆ ԳԵՄԵՐԸՆ  
Ս. ԴԷՈՐԳԵՆՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻՆՃԻՆԻ:

Ըստ հրամանի Ա. Ենափառ Հայրապետի ամենայն Հայոց Վարչութիւն Գէորգեան ձեմարանի Սրբոյ Էջմիածնի օսմանեաց զեմաւեալ կանոն:

Ա. Ընտրութիւն աշակերտաց լիցի. ընդ ձեռն Առաջնորդաց կամ Առաջնորդական փոխանորդաց խորհրդակցութեամբ ընդ Թեմական Տեսչաց, որք պարտին ի ժամ ընտրութեանն յուշ ածել Թէ հիմնական նպատակ ձեռնարանի է պատրաստել ուսուցիչս ի պէտս Հայկական դպրոցաց եւ հոգեւորականս Հայաստանայն եկեղեցւոյ:

Բ. Յայտարարութիւնք Առաջնորդաց վասն ընտրութեան աշակերտաց մատուցանին յանուն Ա. Ենափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Գ. Աշակերտք ընտրելի են առաւելապէս յայնպիսի հայաբնակ տեղեաց, յորս չեւ եւս գտանին կանոնաւոր դպրոցք:

Դ. Ընտրելիքն լինիցին որդիք չքաւոր ծնողաց:

Ե. Աք հասակի ընտրելեացն պարտին լինել ոչ պակաս քան զերկուսասուն եւ ոչ աւելի քան զչորսերասան:

Զ. Պարտ է նոցա բաշտառողս լինել եւ ունել ուշխմութիւն եւ բարեբարոյութիւն:

Է. Ընտրեալն ունիցին վկայագիրս 4. զարժանագրական (մետրիքական) ծննդեան: